Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ-ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ՕՐԱԿԱՐԳ

Չորեքշաբթի՝ հուլիս 26, 2023
10:30-13:00 (Երևանի ժամանակով, GMT+4)

Մեկնարկային հանդիպում

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել. nune.harutyunyan@rec-caucasus.am

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

-

Ծրագրի մասին

Կայուն պետական գնումները գործընթաց է որով պետական իշխանությունը ձգտում է հասնել կայուն զարգացման երեք սյուների՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական հավասարակշռության,երբ ձեռք է բերում ապրանքներ, ծառայություններ, կամ աշխատանք, իր ամենօրյա կարիքները բավարարելու համար:

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը (UNEP) մեկն է այն հինգ գործընկեր գործակալություններից, որոնք իրականացնում են ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» (EU4Environment) ծրագիրը 2019-2024: Տարածաշրջանային այս ծրագիրն աջակցում է 5 երկրներին՝ այդ թվում նաև Հայաստանին, քաղաքականության պլանավորման ու ներդրումների կանաչեցման, նորարարական ապրանքների և տեխնոլոգիաների յուրացումը խթանելու և բնապահպանական գործողությունների օգուտների մասին իրազեկության բարձրացման գործում:
Ավելի կոնկրետ՝ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» «Շրջանաձև տնտեսություն և աճի նոր հնարավորություններ» բաղադրիչի շրջանակներում ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը աջակցում է Հայաստանին կայուն պետական գնումների (ԿՊԳ) և լրացուցիչ գործիքների (այսինքն՝ էկոպիտակավորման) խթանման գործում:

Պետական գնումներն օժտված են հսկայական գնողունակությամբ՝ կազմելով ՏՀԶԿ երկրներում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) միջինը 12 տոկոսը, իսկ շատ զարգացող երկրներում՝ ՀՆԱ-ի մինչև 30 տոկոսը: Պետական ծախսերի տեղափոխումը դեպի ավելի կայուն ապրանքների և ծառայությունների կարող է առաջացնել դրական սոցիալական, բնապահպանական և տնտեսական արդյունքներ, ինչպիսիք են աղքատության կրճատումը, հավասարությունը, ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը, ինչպես նաև էներգիայի ու ռեսուրսների արդյունավետության բարձրացումը: Այն նաև մեծ հնարավորություն է տալիս բիզնեսներին և ներքին շուկաներին դեպի նորարարություն և կայունության բարձրացում մղելու համար: ԿՊԳ-ն այսպիսով ձևավորվում է որպես հիմնական քաղաքականության գործիք՝ Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) ուղղությամբ առաջընթացին աջակցելու և ներառական կանաչ տնտեսության անցումը խթանելու համար:

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը սերտ համագործակցելով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ, Տարածաշրջանային Բնապահպանական Կենտրոնի Հայաստանյան գրասենյակի և Կանաչ անցում ՀԿ-ի (նաև այլ շահագրգիր կողմերի) աջակցությամբ, իրականացնում է ԿՊԳ-ի և էկոպիտակավորման խթանման և կիրառման միջոցառումների շարք: Այն ներառում է օրենսդրական շրջանակների վերանայում՝ մշակելու առաջարկություններ այն մասին, թե ինչպես կարող են ԿՊԳ-ի և էկոպիտակավորման դրույթները ներառվել օրենսդրական ակտերում; ԿՊԳ-ի փորձնական մրցույթների համար ապրանքների առաջնահերթությունների որոշում, որին կհաջորդի ընտրված ապրանքների կատեգորիաների կայունության չափանիշների մշակումը. ԿՊԳ-ի առավելությունների վերաբերյալ իրազեկման և դասընթացային

նյութերի պատրաստում, ինչպես նաև տարբեր թիրախային լսարանների համար ԿՊԳ-ի և էկոպիտակավորման վերաբերյալ միջոցառումների կազմակերպում:

Կայուն պետական գնումների և էկոպիտակավորման խթանմանն ուղղված դասընթաց-աշխատաժողովը կազմակերպվում է ազգային շահագրգիռ կողմերին ներկայացնելու ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի մեթոդոլագիան ԿՊԳ-ների վերաբերյալ, ինչպես նաև քննարկելու համար ԿՊԳ-ի դերը և էկոպիտակավորման սկզբունքները կանաչ տնտեսությանն անցնելու համատեքստում: Հայաստանում ԿՊԳ-ի և էկոպիտակավորման գործողությունների հաջող իրականացման համար շատ կարևոր է համագործակցությունը ազգային հիմնական շահագրգիռ կողմերի միջև. այսպիսով՝ ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի գործունեության մեծ բաղադրիչը կկենտրոնանա ԿՊԳ-ի և էկոպիտակավորման վերաբերյալ մթերողների (պետական կառույցների) և մատակարարների (բիզնեսի) գիտելիքների ամրապնդման վրա:

Դասընթաց - աշխատաժողովի նպատակները

- Ներկայացնել ԿՊԳ-ի և էկոպիտակավորման մոտեցումների վերաբերյալ ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի մեթոդոլոգիան;
- Ներկայացնել Հայաստանում ԿՊԳ-ի և էկոպիտակավորման վերաբերյալ հիմնական գործողությունները և սպասվող արդյունքները, այդ թվում՝ քաղաքականության և օրենսդրական շրջանակների վերանայումը, մեթոդական առաջարկությունները ԿՊԳ-ի համար արտադրանքի առաջնահերթության վերաբերյալ, ինչպես նաև ԿՊԳ-ի չափանիշների կիրառման գործիքները;
- ԿՊԳ-ի և էկոպիտակավորման, ինչպես նաև շահառուների ներգրավման հնարավորությունների վերաբերյալ հայաստանյան շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացում;
- Ներկայացնել ԿՊԳ-ի և էկոպիտակավորման առավելությունները հայաստանյան գնորդներին, մատակարարներին և հաճախորդներին;
- Հզորացնել բիզնեսի կարողությունները՝ ներառական կայունության չափանիշներով հանրային մրցույթներին արձագանքելու համար:

Մասնակիցներ

Հանդիպմանը կմասնակցեն Հայաստանի կառավարության, Շրջակա միջավայրի, Էկոնոմիկայի, Ֆինանսների, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, քաղաքացիական հասարակության, բիզնեսի, համապատասխան շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներ: Աշխատաժողովին ներկա կլինեն նաև Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության և ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի ներկայացուցիչները:

Գործնական տեղեկատվություն

Դասընթաց-աշխատաժողովը տեղի կունենա հիբրիդային ձևաչափով (դեմ առ դեմ և առցանց՝ Zoom հարթակում)։ Անձամբ մասնակցող մասնակիցները հրավիրվում են Օպերա Սուիթ հյուրանոց, Մարշալ Բաղրամյան փ.1, Երևան։
Zoom հարթակում հանդիպումը հասանելի կլինի հետևյալ հղումով՝

https://us06web.zoom.us/j/87243436185?pwd=WnRLNXBlWHRZSGNoUjVEMzk1MHREZz09

Հանդիպման ID: 872 4343 6185

Գաղտնաբառ: 452459

Աշխատաժողովի լեզուներն են անգլերենը և հայերենը։ Կտրամադրվի անհատական և առցանց

անգլերեն-հայերեն համաժամանակյա թարգմանություն։

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայի»-ի մասին

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» գործողության նպատակն է սատարել հինգ գործընկեր երկրներին՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Մոլդովա, Ուկրաինա, պահպանելու իրենց բնական կապիտալը և բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորություններ և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ։
Գործողությունը ֆինանսավորվում է ԵՄ կողմից և իրականացվում է հինգ գործընկեր կազմակերպությունների կողմից. OECD, UNECE, UNEP, UNIDO և Համաշխարհային բանկ։ Բյուջեն կազմում է 20 մլն եվրո։ Գործողության իրականացման տևողությունն է 2019-2024թթ.։
Հետագա տեղեկությունների համար դիմել. EU4Environment@oecd.org։
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել. www.eu4environment.org։

ՕՐԱԿԱՐԳ

Ժամ		
10:30 -11:00	**Սուրճ և գրանցում**	
11:00 - 11:20	**Բացման խոսքեր** • Գայանե Գաբրիելյան, Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ • Հայաստանում ԵՄ պատվիրակության ներկայացուցիչ • Ալեքս Լեշչինսկի, UNEP Եվրոպական գրասենյակ • Նունե Հարությունյան, ԿՏԲԿ տնօրեն • Գոռ Չատինյան, Կանաչ անցում ՀԿ-ի տնօրեն	
11:20-11:35	• **Ընդհանուր ակնարկ Հայաստանում EU4Environment բաղադրիչի ԿՊԳ-ի և էկոպիտակավորման վերաբերյալ, նպատակները և ակնկալվող արդյունքները,** Նունե Հարությունյան, ԿՏԲԿ տնօրեն	
11:35-12:05	• **ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի մեթոդոլոգիան ԿՊԳ-ի և դրա հիմնական տնտեսական, սոցիալական և բնապահպանական օգուտների վերաբերյալ** Լեսյա Նիկոլաևա, UNEP Եվրոպական գրասենյակ • **ԿՊԳ-ի և էկոպիտակավորման կապը: Ինչպե՞ս կարող է էկոպիտակավորումը նպաստել ԿՊԳ-ին:** Մայլիս Նիզան, UNEP Արդյունաբերության և տնտեսության բաժին	
12:05-12:25	Հարց ու պատասխան	
12:25-12:40	• **Պետական գնումների պրակտիկան Հայաստանում. Հայաստանում ԿՊԳ-ի առաջմղման և կիրառման մեթոդիկա և պլանավորում** Հարություն Թունյան, Կանաչ անցում ՀԿ փորձագետ	
12:40-12:55	Հարց ու պատասխան, քննարկում	
12:55-13:00	Փակում	